



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Հուլիսի 22-ին, կիրակի օրը, բազմահազար ուխտավորների ներկայությամբ, ս. պատարագի ընթացքում քահանայական սրբազան ձեռնադրություն և օծում ստացան հոգևոր ճեմարանի շրջանավարտ երեք շնորհալի սարկավազներ՝ ձեռամբ տ. Սիոն արքեպ. Մանուկյանի, որը ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Կոչում նորընծաների

Ծաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի է ունենում նորընծաների կոչման արարողությունը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Հնչում է «Նայեաց ի մեզ» շարականը, բացվում են ավանդատան դռները և բուրվատով ու մոմերով դեպի Իջման ս. սեղան են առաջնորդվում ձեռնադրող արքեպիսկոպոս տ. Սիոն Մանուկյանը և նորընծա երեք սարկավազները:

Խարտավիակ տ. Արիս Ծ. վրդ. Ծիրվանյանը, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, խոսեցու հրաման ստանալով, ասում է.

«Հայր սուրբ, խնդրե՛ ի քեն մայրս մեր սուրբ եկեղեցի, զի ձեռնադրեցես զՅակոբ, զՍամուէլ և զԱնտիք սարկաւագունսս, զոր ընծայէ քեզ, յաստիճան քահանայութեան»:


Այնուհետև հրապարակայնորեն քննվում է նորընծաների հոգևոր-ինացական պատրաստությունը: Քննությունից հետո նորընծաները հանդիսավոր հայտարարությամբ հանձն են առնում «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ, և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Ապա տեղի է ունենում նորընծաների ուղղափառ դավանության հրապարակային քննությունը: Նրանք միաբերան հայտարարում են. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ Հայրապետսն...» և խոստանում են աշակերտել և հետևել եկեղեցու ուղղափառ և աստվածաբան Հայրապետներին և վարդապետներին:

Արարողության ավարտին նորընծաները հրապարակայնորեն տալիս են իրենց «Հաւատոյ խոստովանութիւն»-ը՝ ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի («Մաշտոց Ձեռնադրութեան», Վաղարշապատ, 1876 թ., էջ 36—37):

Ձեռնադրության և օծման կարգը

Կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում սկսվում է ս. պատարագի արարողությունը: Պատարագում է տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:



«Ձի ողորմած և մարդասեր ես Աստուած» մատյանքից հետո հանդիսավորապես հընչում է «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» շարականը:

Է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն



Մի պահ ձեռնադրության արարողությունից

Նորընծաները, ձեռնադրող արքեպիսկոպոսի առաջնորդությամբ, ձախակողմյան աստիճաններով ծնրադիր բարձրանում են Ավագ խորան և, հավատացյալների խորաներում բազմությանը դառնալով, բարձրացնում են իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման:

Մայր տաճարի կամարների տակ հանդիսավոր ու հաղթական հնչում է «Աստուածային և երկնատուր շնորհ» շարականը:

Հավատացյալ ժողովուրդը, հոգեպես միաձուլվելով այս արարողությանը, համոզումով և գոհունակությամբ ասում է. «Արժանի են»:

Այնուհետև նորընծաները շրջվում են դեպի Ավագ խորան, և տ. Միոն արքեպ. Մանուկյանը. իր ձեռքերը խաչաձև դնելով նորընծաներից յուրաքանչյուրի գլխին, ասում

Աստուծոյ:

Այնուհետև շարունակվում է ս. պատարագի արարողությունը մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը, որից հետո աղոթքով ու սրբությամբ նորընծաները ստանում են քահանայական փիլոն և պատարագիչի զգեստներ:

Հանդիսավոր արարողությունը հասնում է իր նպատակակետին, հոգևոր վերացման սրբազան բարձունքին, երբ ձեռնադրող արքեպիսկոպոսը, քահանայական լրիվ զգեստավորման մեջ կանգնած, երեք նորընծաների ճակատն ու ձեռքերը օծում է ս. մյուռոնով և նրանց վերանվանում հոգևոր նոր անուններով:

Այսպես՝ Հակոբ սրկ. Գյուկչյանը վերանվանվում է տ. Հակոբ քահանա, Սամվել սրկ. Պետրոսյանը՝ տ. Եզնիկ քահանա, և

Ավետիք սրկ. Արաբաջյանը՝ տ. Անանիա քահանա:

Ապա նորընծաները տ. Սիոն արքեպ. Մանուկյանի ձեռամբ ստանում են «զակիհն և գմաղզմայն», որպես պատարագ մատուցելու իշխանության նշանակ, և դառնալով ժողովրդին տալիս են իրենց անդրանիկ քահանայական օրհնությունը՝ «Խաղաղություն ամենեցուն»:

Տ. Սիոն արքեպանը բովանդակալից ու խրատական-շնորհավորական քարոզով դիմում է նորընծաներին՝ ցանկանալով նրանց տեսնել մեր ս. եկեղեցին պայծառացնող սպասավորների շարքում:

Այնուհետև ս. պատարագը շարունակվում է մինչև հավարտ:

Ս. պատարագից հետո նորընծաներին առաջինը շնորհավորում է Վեհափառ Հայրապետը, ապա Մայր Աթոռի միաբանությունը և բազմաթիվ հավատացյալներ:

Վեղարի տվչություն

Հուլիսի 22-ին, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում են «Օրհնություն աբեղայի» և «Օրհնություն վեղարի» կարգերը:

Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը հանում է նորընծա տ. Եզնիկ և տ. Անանիա քահանաների գլխներից սարկավագական ջրբրուներ (գդակ)՝ այն փոխարինելով կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով՝ ասելով. «Հանցե Աստուած գհին մարդն գործովք իրովք: Աստուած զգեցուցեք թեզ գնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հատատեալ է արդարութեամբ և սրբութեամբ...»:

Արարողությունից հետո երեք նորընծաները, տ. Սիոն արքեպ. Մանուկյանի, տ. Հուսիկ եպս. Սանթրոյանի և տ. Արիս Ծ. վրդ. Շիրվանյանի առաջնորդությամբ, ներկայանում են Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբությունը հուզումով և հայրական սիրով ընդունում է իր հոգևոր զավակներին, նրանց բաշխում իր սրբազան օրհնությունն ու բարեմաղթությունները և ցանկություն հայտնում նրանց տեսնելու հաջ ե-

կեղեցու արժանավոր սպասավորների շարքերում՝ որպես «մշակք առանց ամօթոյ»:

Տ. Եզնիկ արեղա Պետրոսյան.

Ավագանի անունով՝ Սամվել Ծնվել է 1955 թվականին Թբիլիսիում: 1958 թվականին ընտանիքի հետ փոխադրվել է Երևան և 1967 թվականին, ավարտելով միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանը, ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1971 թվականի դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանի:

1972—1973 ուսումնական տարում ավարտել է հոգևոր ճեմարանը: Ավարտաճառի նյութն է Մովսես Երզնկացու «Մեկնություն պատարագի»:

Տ. Անանիա արեղա Արաբաջյան.

Ավագանի անունով՝ Ավետիք Ծնվել է 1951 թվականին Երևանում: 1968 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը: Հոգևոր ճեմարան է ընդունվել 1970 թվականին: 1971 թվականի դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանի:

1972—1973 ուսումնական տարում ավարտել է հոգևոր ճեմարանը:

Ավարտաճառի նյութն է «Ռուս եկեղեցու պատմությունն ու դավանությունը»:

Տ. Հակոբ քահանա Գյուլչյան.

Ծնվել է 1938 թվականին Բեյրութում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ազգային վարժարանում: 1946 թ. ընտանիքով ներգաղթել է Երևան, ուր 1956 թ. ավարտել է միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան և ավարտել այն 1961 թ.: 1962—1966 թթ. սովորում և ավարտում է Երևանի պետ. համալսարանի պատմության ֆակուլտետը և մինչև քահանա ձեռնադրվելը աշխատել է Մայր Աթոռի դիվանատանը: 1960 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1968—1970 թվականներին դասախոսել է հոգևոր ճեմարանում:

